

Արշակունի

Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Ա.ՋԱՏՈՒԹԻՒՆԸ չափու
համար չէ որ կը հրատա-
րակուի:

Ա.ՋԱՏՈՒԹԻՒՆԸ տունէ
տուն ու քաղաքէ քա-
ղաք չընկնող դրամ կամ
բաժանորդ չի մուրար:

ՀԱՅ Ժողովրդի յատկա-
գիտութիւնը մեր շահն
է, իսկ Հայոց ազատու-
թիւնը Ա.ՋԱՏՈՒԹԻՒՆԻ
նպատակն է...

Circulation
larger than
any other
Armenian paper
in the U. S.

Դ. ՏԱՐԻ ԹԻՒ 52

ՆԻՒ ԵՈՐՔ, 1892, ԱՊՐԻԼ 15

ԳԻՆ ՀԻՆԳ ՍԷՆԹ

ՀԱՅԿԱՅԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ Զ. ՏԱՐԵԴԱՐԶԻ ՀԱՆԴԵՍԸ

Ապրիլ 2ին, Շարաթ երեկոյ
տեղի ունեցաւ Հայկական Միութեան
վեցերորդ տարեգարծի հան-
գէսն ի թիւ 161 թրք Ավենիւ, Նիւ
Եորք: Խոսն բազմութիւն մը
երկեսո ազգայնոց փութացեր էին
ներկայ գտնուել այս հանգէսին
այլ և այլ կողմերէ: Ժամը ծին
արդէն ժողովուրդը ներկայ էր,
բայց հանգէսն կէս ժամի չափ ուշ
սկսեցաւ հակառակ յայտադրի ծա-
նուցման որոյ մէջ ըստէնքն ան-
գամ հաշիւի դրուած էին: Արդա-
րեւ զարմանալի էր տեսնել թէ՛
աշխարհի սովորութեան հակառակ՝
կարգադրի մասնախումբն իւր յայ-
տադրին մէջ այդչափ բժանդէր
ըլլալ փորձած էր, բայց աւել-
ի զարմանալին այն էր որ ըստ-
էնքն հաշուող մասնախումբը խիղճ
ըրաւ կէս ժամ մի անգամէն
կուլ տալ:

Հանգէսն նախանուագով մը
բացուեցաւ որ ըստ յայտադրի՝
5 վայրկեան տեւեց, և Տիար
Աստուածատն այս նուագէն վերջ
տար ըստէնքն մէջ իւր բացման
ծառը խօսեցաւ, յորում ըստ ի
մէջ այլոց թէ՛, ոմանք Հայութիւն
և Միութիւն բառերն թէ՛եւ ան-
միաբան կը կարծէին, բայց Հայ-
կական Միութիւնն փորձով ցոյց
տուաւ թէ՛ այդ բառերն կրնային
միանալ, և հպարտութեամբ յայ-
տարարեց թէ՛ Հայկական Միութեան
494 միլիոն և քանի մը հար-
իւր հազար երկվայրկեաններէ ի
վեր կանգուն մնացած էր Ամերի-
կայի մէջ: Այս բացման ծառին
յաջորդեց ջուրհանգարութիւն
մը որոյ ջուրհանգարն էր Պ. Շի-
րէճեան անուն մի Հայազգէս, և ա-
պա Օր. Տատրեան, ինչպէս ամէն
տարի նոյնպէս ալ այս անգամ մի
Անգլիկէն երկայն երգ արտասա-
նեց, թէ՛եւ ներկայից ահագին մե-
ծամանութեան անհատական լու-
րորդին: Նուագախումբն որ կը
բազմանար Տ. Շիրէճեանէ, Տ. Եր-
կանեանէ, Տ. Ալիքսանեանէ և Տ.
Խօջաֆեանէ մի երգ նուագեցին
յիշեալ առողանութեան վերջ և
յետոյ Տ. Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս.
ըստ աւելորդ մի ատենախօսու-
թիւն ըրաւ, որ ընդունուեցաւ
թուան ծափահարութեամբ: Տիկին
Յակոբեան ատենախօս բժիշկն յե-
տոյ իւր քաղցրահնչիւն ձայնով
երգեց «Մայր Արաքսին» որ ուրիշ
ամէն մասերէն աւելի խորին տալա-
ւորութիւն թողոց ժողովրդի
վրայ:

Տիկին Յակոբեան ոչ միայն
բուան ծափահարութիւններ խնց
ժողովրդէն այլ և ստիպուեցաւ մի
այլ երգ ալ երգել, ժողովրդեան
ընդ. թիւանանայ գոհացում
տալու համար, և այս երգով հան-
գիսի առաջին մասը փակուեցաւ:

տասը ըստէնքն արուելով ժո-
ղովրդեան, որոյ՝ ըստ յայտադրի՝
ստատ օչարակ մատուցուեցաւ,
թէ՛եւ ոչ այնքան համեղ որչափ
համեղ էին «Մայր Արաքսին»
լեզու արտասուքն որ տխրութեամբ
համակեց պանդուխտներու ծա-
ռուելու ու ցամաքեալ սրտերն ու
հոգիներն:

Հանգիսի երկրորդ մասին մէջ
ջուրհանգարն մեծ տեղ կը բռնէին,
ոյց յատկացեալ 5-10 վայրկեան-
ներն երբեմն քառորդ ժամաւին:
Այս մասին մէջ Օր. Ա. Ս. Ս. Ս.
«Հիմի է՛լ լուսնը» երգի արտասա-
նութեամբ զոր ուրիշ անգամներ
եւս արտասանած էր մեծ յաջողա-
կութեամբ:

Այս մասի մէջ՝ յայտադրէն
զուրս լինելով մի քանի երգեր եր-
գուեցան Տ. Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս.
կողմէն:

Հանգիսի երրորդ և վերջի մա-
սը անցաւ ջուրհանգարնի միջոց
ովորտ: Երբ փութը բեմին երեսը ծած-
կող վարագոյրն բացուեցաւ, Հայ-
կական Հին հաղուստներով մէկը
երեւեցաւ ժողովրդեան, սրն որ
իւր ետեւ՝ պատին վրայ կախուած
Ս. Վարդան Մամիկոնեանի պատ-
կերին առջեւ անգամ քանի մը
կրնար սեպուել: Սա անձ Վար-
դան էր, որ եկած էր այստեղ մա-
նէր որտալ Հայ ժողովրդի գլխին:
Պատմեց մանրամասնաբար թէ
ինքն ինչպէս պատերազմեցաւ
Պարսից հետ, և յետոյ յանուն
Աստուծոյ սկսեց անիծել Հայ ժո-
ղովրդեան մասնախումբներն, չափա-
նախորդ զործիչներն և այլն որ ի
կարգին: Այս անկերը անէծքներն
այլ և այլ նշանաւոր գործիչներու
չառեր չի կրնար չի համբերել
մեկնել սկսեցին, և մեր Պարոն
Վարդանն ստիպուեցաւ անկատար
թողուլ իւր պատգամներն ու պահ-
ուել նորէն վարագոյրն ետեւ:
Այս դեր ներկայացնող անձն էր
Տ. Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս.
կողմէն, որ արդարեւ գէշ ընտ-
րութիւն մը ըրած էր և անպար-
մար հոն ներկայացնելու համար:

Գիշերն բաւական անցած էր
երբ հանգէսն փակուեցաւ և ժո-
ղովրդին կէս գուն և կէս գոգոն
սպաւորութեան տակ մեկնեցաւ՝
մարտելու համար Հայկական Մի-
ութեան վեցերորդ տարեգարծի
հանգէսն:

ԵՐԳԵՐ ԿՈՒՋՈՒՆԻՆ

Մեր հրատարակած Ազգային
երգարանին մէջ նպատակ ունենա-
լով զինք կարգ մը չի հրատարակ-
ուած ազգային երգեր ու բանաս-
տեղծութիւններ պատիւ ունինք
ներկայիս յայտարարել արդոյ
հատարակութեան թէ՛ սիրով պի-
տի ընդունինք մեզ զրկուած ամէն
երգեր ու բանաստեղծութիւններ՝
հրատարակելու համար այս ընդար-
ձակ երգարանին մէջ:

Առանց երգ մը տեսնելու և
քննելու հրատարակութիւնն չենք
ապահովել:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԽԱՉԻԿ ՕՍԿԱՆԵԱՆ

Փափաքելով Ամերիկեան նշա-
նաւոր Հայոց համառոտ կենսա-
գրութիւններն հրատարակել Ա.ՋԱ-
ՏՈՒԹԻՒՆԻ մէջ՝ այսօր կարտադ-
րենք Ա.ՓԵՂԻՍԵՆԻ Հոգաւոր հա-
մագիտարանէն Տ. Պ. Օսկանեանի
նկատմամբ գրուածներն:

Խաչիկ Օսկանեան, հեղինակ,
ծնած է ի Կ. Պոլսի, Թուրքիա,
1818 Փետր. 22ին, իւր ծնողքն
որը Հայ էին միւրտեղին զինքն իս-
լիկ անունով: Սա մասնաւոր ու-
սուչիւններէ ստիպեցաւ Հայերէն,
Տաճկերէն և արդի Յունարէն լե-
զուներն, որոց քիչ յետոյ յարեց
նաեւ իտալական և ֆրանսական լե-
զուներն ևս: Բայց լեզուի Անգլի-
կէն լեզուի խօսակցութիւնն՝ փա-
փաքեցաւ զայն եւս ուսանելու, և այս
փափաք լեզուներ համար, ծանո-
թացաւ Ամերիկայի միախնարաց
որը նոր հասեր էին ի թուրքիա:
Ասանց մին՝ Պատ. Հ. Վ. Օ.
Տուրայի շահագործութեամբ Օսկան-
եանի ցոյց տուած ձերբերէն նորա
մօր հաւանութիւնն առնել վերջ
զերբութիւն տուաւ անոր Ամերի-
կայ գալու և հոն ուսանելու, հա-
մար:

Օսկանեան Նիւ Եորք հասաւ
1835ին և անմիջապէս մտաւ քա-
ղաքին համալսարանը, բայց ա-
ռողջութիւնն փնտաւիլ սկսած լի-
նելով ստիպուեցաւ թողուլ վար-
ժարանն ու միանալ Չարլսթըն
և Սինսինատի երկաթուղին շինող
քաղաքական շափաղեաներու (սի-
նսինատի) խմբին: 1841ին Կ.
Պոլսի դառնալով առաջին Հայերէն
լրագիրն հրատարակել սկսեց «Ազ-
գարար Բիւզանդեան» անունով,
բայց կառավարութիւնն չի թողա-
տելով ազատ գաղափարաց ար-
տայայտութիւնն, Օսկանեան ըս-
տիպուեցաւ թողուլ իւր ձեռնար-
կն: 1843ին Սուլթանի փեսային՝
Ֆէթթի փաշայի առանձին գրա-
գիրն եղաւ: Այս պաշտօն գեւ կը
վարէր նա՝ երբ նոր պաշտօն մը
տրուեցաւ իրեն Ատիլ Սուլթա-
նայի օժիտներն գնելու, որ պիտի
ամուսնանար Ալի փաշայի հետ:
Այս առթիւ Օսկանեան առիթ կու-
նենար յաճախ այցելել պալատն:

Ամուսնութենէ վերջ Օսկան-
եան սկսեց ամերիկեան և եւրոպա-
կան լրագրաց գրելով զբաղել:
1849ին գրեց «Աքալի» անուն վե-
պըն տաճիկ լեզուաւ բայց Հայ
տառերով: Սորա յաջորդեց մի այլ
գործ 1851ին «Վէրնիքա» անու-
նով և յետոյ աղայոց համար մի
այլ հեղինակութիւն հրատարա-
կեց «Պետիկ» անունով:

Միեւնոյն տարին հրատարա-
կեց նաեւ «Փաղտնիք Փարիզի»
Հայերէն մի թարգմանութիւնն:
1853ին այլոց օգնութեամբ Լոնտոն-
նի մէջ մի միւլտի-բայց, բայց
այս ձեռնարկ յաջողութեամբ պը-
սակուած չի լինելուն ձգեց զայն
ու Նիւ Եորք վերադարձաւ: Հոս
գրեց ու հրատարակեց «Սուլթա-
նըն ու անոր ժողովուրդը» անուն
գիրքը (Անգլիկերէն) 1857ին, որմէ
16000 օրինակ վաճառուեցաւ մի
քանի ամիս մէջ: 1865ին Տ. Օս-
կանեան տաճկական ընդհանուր
հիւպատոս տնտեսուեցաւ Նիւ

Եորքի, և այս պաշտօնի մէջ մնաց
մինչեւ 1874: Առիթ ունենալով
1872ին Կ. Պոլսի այցելել, բարձ-
րագոյն դրան կողմանէ պաշտօն
տրուեցաւ իրեն Սուլթանի ներ-
կայացուցիչն լինել պատուաւրե-
ւու զՋոր. Ուիլիամ Շէրիման՝ մինչ
այս վերջինն Թուրքիայի մէջ կը
գտնուէր իւր այցելու:

Տ. Օսկանեան հրաժարելով իւր
հիւպատոսութեան պաշտօնէն ինք-
զինքն կրկին գրական ապարէզն
նետեց Նիւ Եորքի մէջ, ուր միե-
նոյն գործով զբաղեալ է ցայսօր
(1888): Վերջեւ գրած է նաեւ մի
այլ գործ իւր բնիկ երկրի վրայ
և գոմիկ օփէրայի ձեւով:

Ամերիկեան համագիտարանէն
զայս օրինակել վերջ աւելորդ կը
սեպեմք այլ ինչ յաւելուլ ասոր
վրայ: Տ. Օսկանեան որ ալեւոր
ծերունի մ'է այսօր, գեւ կաշա-
տի այնպիսի եռանդով մը որ յա-
տուկ է երիտասարդներու միայն:
Իւր յօդուածներն թէ՛ ազգային
և թէ՛ այլ նիւթերու վրայ լեց-
ուած են տեղական թերթերու
մէջ գրեթէ ամէն օր:

ԻՆՁ ՄԻՋՈՑՆԵՐՈՒ ԵՆ ԴԻՄՈՒՄ

Ներսէս Վարժապետեանի մահ-
ուանից յետոյ՝ առաջին մարդը,
որին կամեցաւ և այժմ էլ կամե-
նում է ազգն տեսնել կաթողիկո-
սական դահլի վրա, — իրմեանն է:

Այս րոպէիս, երբ էջմիածնի
գահակալի խնդիրը դարձել է ամ-
բողջ ազգի մտածութեան առար-
կայ և ամէն Հայի հետաքրքրու-
թեան նիւթ, երեսուցէ մ'նստած
ուխտաւորն իրան է գրաւել ամ-
բողջ Հայութեան հայեացքը: Հայ-
Հայրենիքից, սիրած ժողովրդից,
սիրած վայրերից հեռու է նա, բայց
Հայ ժողովուրդը նրան չէ մեռա-
նում, և եթէ ուշագործեամբ
ակա՛նջ դնենք ժողովրդի ձայնին՝
ամէն տեղ կը լսենք իրմեան ու
իրմեան: Մեր ժողովուրդը ան-
կեղծօրէն գրում է, որ այժմ ա-
մենայարմար ժամանակն է երու-
սաղէմի վանքի խօսքից էջմիածնի
վեհարանը տեղափոխել այն մեծ
ծերունուն, որի անցեալ կեանքը
մի պատմութիւն է, գործունէու-
թիւնը՝ մի կատարեալ վերածնու-
թիւն, և գոյութիւնը՝ մի մեծ
իդէալ:

Չը կայ և ոչ մի Հայ, — վըս-
տահութեամբ կարող ենք ասել,
որ համարձակվէր ասել. «Իրմե-
ան յարմար չէ կաթողիկոսու-
թեան»: Բայց չենք թաղցնում և
այն, որ կան մարդիկ, այն էլ ին-
տելիգենցիայի և մամուլի մէջ, ո-
րոնք իրեն վախճաններ, քաջու-
թիւն չունենալով բացարձակ կըռ-
ուելու Հայրիկի թեկնածութեան
դէմ, դիմում են ամենախորա-
մանի, ամենամանգնիւ միջոցնե-
րին մտքերը պղտորելու և իրմե-
անի թեկնածութեան առաջ փոս
փորելու համար:

Իրմեան Հայրիկի այդ տեսակ
թաղնիկած հակառակորդները, ո-
րոնք երեւան են եկել թէ մեր
տեղական և թէ արտասահման-
եան մամուլի մէջ, ասում են.
«Այո, ճշմարիտ, իրմեան մեծ
մարդ է, բայց նա չէ կարող կա-
թողիկոս լինել, որովհետեւ շատ
ծեր է և մահամերձ հիւանդ»: Վերջին
ժամանակներս արտասահ-
մանում լուրեր են տարածել մի-
ջեւ անգամ թէ Հայրիկն այնքան
հիւանդ է, որ բժիշկները ձեռք
են վերցրել, և նոյն իսկ մութ ան-
կիւններից լուրեր դուրս ցղեցին,
որ Հայրիկը մեռել է... Բարե-
բաղդաբար, և ի մեծ ուրախու-
թիւն ամբողջ ազգի՝ այդ լուրերը
միանգամայն չինձու և և սուտ.
Երեսուցէ մից հաստատ տեղեկու-
թիւններ են ստացված, — որ և
հաստատում են արտասահմանի
լրագիրները թէ իրմեան Հայրիկ
լրագրովին ողջ և առողջ է և մի-
անգամայն չինձու և նա այն լուրերը
որոնք տարածված են յայտնի նըս-
պատակներով:

Իրմեան Հայրիկը ներկայու-
մըս 72 տարեկան է միայն: Նա
այնպիսի ամուր կողմուածքի և
արտասովոր առողջութեան տէր
մարդ է, որ ոչինչ հիւմը չը կայ
կարծելու, թէ նրա օրերը համարձ-
են, 72 տարեկան հասակը իրմե-
անի նման կազմվածք և առող-
ջութիւն ունեցող մարդկանց հա-
մար — զառամեալ հասակ չէ:
Ամբողջ յիսուն տարի ամեն տե-
սակ զրկանքների դիմացած, բա-
րոյակաւ և ֆիզիկական դժուա-
րութիւնների հետ կռուած մար-
դը, որը իրեն վառվառ երիտա-
սարդ գիտէ ոգեւորել իր սի-
րած գաղափարներով և մտքերով,
— նոր ոգի և նոր սիրտ կառնի,
երբ ազգը նրան կը կանչի բազմե-
լու Մայր Աթոռին վրա: Այն մար-
դը, որը դիմացաւ Վասպուրական-
ի կեանքի բոլոր նեղութիւննե-
րին, որը չընկճվեց Կ. Պոլսի մէջ
իր դէմ լարած մեղեդայութիւն-
ներից, և որը, վերջապէս, այժմ
էլ դիմանում է երեսուցէ մի խու-
ցակի անտանելի կեանքին և մըթ-
նոլորտին, անկասկած, կարող կը
լինի երկար ապրել և գործել այն,
համեմատաբար՝ շատ քաւ պայման-
ներում, որոց մէջ պիտի ապրի
Հայոց կաթողիկոսը:

Նրանք, որոնք իրմեանի ան-
յարմար են համարում կաթողիկո-
սութեան համար, նրա ծերու-
թեան և հիւանդութեան պատ-
ճառով, իրանք էլ շատ քաւ են
զըռում, որ այդ բոլորը չինձու և
խախտու հիւմքեր են, — բայց ըս-
տիպուած են կանգնել այդ շին-
ծու և խախտու հիւմքերի վրա,
որովհետեւ ուրիշ ոչ մի միջոց չու-
նեն դիմադրելու Հայրիկի թեկ-
նածութեանը:

Իսկ ասել թէ Հայրիկը ար-
ժանի չէ կաթողիկոսութեան, կը
նշանակէ ուրանալ լոյսը, ճշմար-
տութիւնը, կը նշանակէ վիրաւո-
րել ամբողջ ազգը և նրա առաջա-
գիտութիւնը, — մի պարզ յան-
ցանք, որը օր ցերեկով չէ կարող
զործել և ոչ մի Հայ, եթէ նա իր
գլխում խնդր ունի և սրտումը՝
զգայմունք:

(ՄԵՍԿ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴ

ԿԻՍՍՄՍԵԱՅ
ԱԶԱԴՈՒՄԻ ԻՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ
ԱՄՍՈՅՆ 15 ԻՆ ԵՒ 30 ԻՆ

Խմբագիր—Տնօրէն
ՀԱՅԱՍՏԱՆԻ Ս. ԷԿԻՆՅԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամէն երկրի համար
Տարեկան Մէկ տոլար

Ո՛ր և է ծրար կամ գրութիւն
ազգայն Հետեւեալ հասցէին
TO THE **AZADOUTIUN**,
12 Frankfort St.
New York City, U. S. A.

Azadoutiun
LIBERTY.

Published Twice a month
By
Azadoutiun Publishing Company
12 Frankfort St.,
NEW YORK CITY
H. ECUINIAN,
Editor.

SUBSCRIPTION PRICE, free of page, \$1.00 a vo
Entered at the New York Post Office as
second class mail matter.

ՆՈՒ ԵՈՐԹ, 1892 ԱՊՐԻԼ 15

Սիրէ նախ զԱստուած, յետոյ
Հայրենիքդ, Հայրենակիցդ ու քու
անձդ :

Այն որ իւր անձը Հայրենիքէն
աւելի կը սիրէ ազգատեսաց է, և
յանցաւորայնչաւոր իրաւի այն կար-
գի մարդիկ որք չեն սիրեր զԱստ-
ուած այնչաւոր իրաւի կը սիրեն
իրենց չափն ու անարգ քսակն :

Մի ատեր ընկերդ՝ եթէ ըն-
կերդ է բառին կատարեալ նշանա-
կութեամբ, զի իւր ընկերն չի սի-
րող մէկը իւր ազգէն չի կրնար սի-
րել: Եւ մի սիրէր այն անձը որ ըն-
կերի մը քոյին տակ թշնամի մ'է
քո Հայրենեաց ու քո անձին :

Նա որ չարիք կը գործէ և չի
գիտեր թէ չարիք կը գործէ, ըզ-
գուշացիր անկէ, բայց մի ատեր
բոլորովին, զի կրնայ որ մը չարու-
թիւնն ի բաց վանել իրմէ: Բայց
ատէ՛ն՝ այն մարդը որ չարիք կը
գործէ և գիտէ թէ չարիք կը գոր-
ծէ, այլ անմեղութեան զիմակով
կը սողայ օձի մը պէս՝ անմեղու-
թիւնն խալթելու ու վնասելու հա-
մար :

Այն անձը որ բարիք կը գոր-
ծէ և չի գիտեր թէ բարիք կը
գործէ, սիրէ զայն, բայց անոր մի
վստահել բոլորովին, զի անոնց
գիտակցութեան բարիք գործող
մարդիկ կրնայ ըլլալ որ օր մը իսա-
բէութեան թախարդին մէջ բռն-
ութիւնն ու վստահութիւնդ չարա-
չար գործածեն :

Երբ չարը նեղութեան մէջ լի-
նայ, քծնիլ կտկտի ու կը համակրի
ամէն սկզբունքի իւր «մանածն
մանկեւն համար», բայց իրենց նե-
ղութեան մէջ միայն քեզ համակ-
րող անձինք, ոչ համակրանաց
և ոչ օգնութեան, այլ ամէն ատե-
ութեան և անարդանաց արժանի
են միշտ: Մի հաւատարմ անոր որ
ազգայնի կամ անուղղակի կերպիւ
օգտուելու համար միայն քեզ հա-
մակրակից կը դառնայ, զի այդ-
պիսիք ուր չա՛հ տեսնեն ինչ է ի-
րենց Հայրենիք և ինչ միայն գա-
ղափարակից :

ՄԵՐ ՊԱՏՈՒԻՐԱԿԸ
Թէհրանէ առնուած մասնա-
ւոր թղթակցութեանց նայելով,
Մեր արդոյ Պատուիրակն՝ Պարսից
վեհ. Շահէն ընդունած է Արիւծի
և Արեգական չորրորդ կարգի
պատուանշան զայն վաւերացնող
պաշտօնական հրովարտակով հան-
դերձ :



Յ. ՍԱՐԱՅԵԱՆ

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ յանուն Ամե-
րիկայի Հայ գաղթականութեան
կը փութայ շնորհաւորել զՏ. Սա-
րաֆեան իւր պաշտօնին խղճի մը-
տօք և յաջողութեամբ կատարած
լինելուն համար, և կը պարծի ար-
ձանագրելով սա տողեր թէ Նոր
աշխարհի գաղթականութիւնն յա-
ջողութեամբ ի կատար հանեց գործ
մը որոյ չար քննադատներն բազ-
մաթիւ էին :

ՊԱՏԱՀԱՐ ՄԷ

Իբր տասն և հինգ օրեր առաջ
բազում տարիներէ ի վեր Նիւ Եոր-
քի մէջ բնակող մի կրթեալ Հայ
երիտասարդ, Գրիգոր Ծաղիկեան
անուն, կէս օրի ատեն քաղաքիս
թղթատարութեան մեծ շէնքէն
դուռն ելած ծրար մը նամակնե-
րով, որոց մէջ կար նաեւ մի թերթ
ԱԶԱՏՈՒԹԻՒՆ: Սա պարտն ան-
միջապէս Պրօտուէյէն անցնող մէկ
կառքին մէջ մտաւ Զոր փողոցի
կողմերն երթալու համար: Երեք
ուրիշ անձինք ևս կային կառքին
մէջ, որոց առանց ուշադրութիւն
դարձնելու, մէկին մօտ նստեցաւ
ու սկսեց նամակներն մէկիկ մէկիկ
բանալով ստորագրութիւններուն
նայիլ ու առանց դանդաղ կարգա-
լու մէկիկ դնել, կարծես թէ կա-
րեւոր լուր մը կապաւոր այս երի-
տասարդն: Բայց վերջապէս յու-
սակներն ժողովելով գրական դը-
րաւ բացի ԱԶԱՏՈՒԹԻՒՆէն որոյ
գոտին պիտի պատուէր զայն կար-
գալու համար: Այս միջոցիս կառ-
քի միւս անկիւնն նստող մի պա-
տանի, որ նորեկ մը կը թուէր, մեր
պարտնի ուշադրութիւնն գրականց
նորեկ պարտն ալ ԱԶԱ-
ՏՈՒԹԻՒՆ կը կարդար, և սա բա-
ւական էր գիտնալու թէ Հայ մ'էր
ինք: Ծաղիկեան հետաքրքրուե-
լով զնայ յիշեալ պարտնին քով
նստեցաւ ու անոր ականջն ի վար
փախաց այսպէս :

— Դուք Հայ էք պարոն :
— Այո՛, Հայ եմ, պատասխա-
նեց նորեկն զարմացմամբ, և այդ
է գլխաւոր պատճառն որ Հայե-
րէն լրագիր մը կը կարդամ: Բայց
կաղաչեմ ի՞նչ էք դուք ազգաւ,
միթէ՞ դուք ալ Հայ էք :
— Այո՛, ես ալ Հայ եմ, ըսաւ
Ծաղիկեան, մեղմիւ մը ժպտելով,
և շատ ուրախ կըլլամ երբ Հայու
մը, մանաւանդ նորեկ Հայու մը
կը հանդիպիմ այսպէս :
— Ինչէ՞ն գիտէք իմ նորեկ մը
ըլլալս :
— Ինչպէ՞ս գիտէք իմ նորեկ մը
արդեօք իմ վրայ :
— Ձեր երեւոյթն նորեկի մը
երեւոյթն է. եթէ քեզ մը ատեն

Հոս մնաք՝ դուք ալ նորեկը պիտի
ճանչնաք երբ առաջին անգամ
Հանդիպիք անոր: Բայց ինչ և է :
Ի՞նչ է ձեր անունը և որ քաղա-
քացի էք, կրնաք բանել ինձ :

— Ես Վանեցի եմ, իմ անու-
նըն է Միկրտիչ Ծաղիկեան, իմ
եղբայրս, որուն քով կըրթամ ես,
15 տարին ի վեր է որ կը բնակի այս
քաղաքի մէջ և դուք էլ լսած էք
անոր անունը :

Պ. Գ. Ծաղիկեան ուրախու-
թեամբ լեցուեցաւ, առանց սա-
կայն ինքզինքը մասնելու :

— Այո՛, կը ճանչնամ ձեր եղ-
բայրը, բայց դուք կը յիշէ՞ք անոր
դէմքն ու երեւոյթը :

— Ես մանուկ էի երբ մեկնե-
ցաւ Վանէն, երազի մը պէս հա-
ղիւ կրնամ յիշել իւր դէմքը :

— Ես կը նմանիմ անոր :
Նորեկն այս հարցման վրայ
չուարեցաւ քիչ մը :

— Եթէ անոր դէմքն լուս յի-
շէի, կրնայի պատասխանել ձեզ
չուս մը, ըսաւ :

— Գ. Ծաղիկեան իմ անունս
է, եղբայր, և քեզմէ լուր մը առ-
նելու համար է որ այսօր այս կող-
մը եկայ :

Նորեկն, որ բարեկիրթ պատա-
նի մ'էր, այս յանկարծական պա-
տահման վրայ արձանի մը պէս
անշարժ ու անձայն մնաց բաւա-
կան ատեն, այսուհանդերձ կառ-
կածանայ նշաններ կերեւէին իւր
դէմքի վրայ, կարծես թէ չէր հա-
ւատար իւր խօսակցի անկեղծու-
թեանը վրայ :

Պ. Գ. Ծաղիկեան նշմարելով
զայս ամէնն՝ իւր ձեռքի ԱԶԱ-
ՏՈՒԹԻՒՆն որոյ գոտին պատուած
չէր տակաւին, իւր եղբորը տուաւ
ըսելով :

— Կերեւի թէ կը կասկածիս
տակաւին: Նայէ այս թերթի կա-
պոյցն և անսթէ՛ որո՞ւ անունն
ուղղուած է այս :

ԱԶԱՏՈՒԹԻՒՆԻ և անոր գո-
տի շնորհիւ երկու եղբայր ճանչ-
ցան մէկմէկ :

Տարեկան բաժանորդագիրն է
մէկ տոլար: Կը հրատարակուի ա-
միսը երկու անգամ: Բաժանորդա-
գրուիլ փափաքողք պարտնի դի-
մել խմբագրութեանն հասցէին :

ԽՐԻՍՏԱՆ ՀԱՅՐԻԿ

Հայրիկը վարագայ վանքից,
որպէս նրա սովորութիւնն էր, մի-
այնալ, ոտքով վան քաղաքը դը-
նալու ժամանակ, ճանապարհին
հանդիպում է նրան մի քուրդ :
Երբ Հայրիկը իր արծուի հայեաց-
քով նայում է նրա երեսին, աւա-
զակը շփոթվում է, նրա ձեռքը
սկսում է դողալ :

— Ինչո՞ւ շփոթուեցար, բա-
րեկամ, — հարցնում է Հայրիկը
իր սովորական մեղմ ժպտով :

— Ուղղում էի քեզ սպանելու,
պատասխանում է աւազակը, և
չոքելով նրա առջև, գրկում է
նրա ոտները :

— Ինչո՞ւ չը սպաննեցիր, —
հարցնում է Հայրիկը, վեր բարձ-
րացնելով նրան :

— Աստուած իմ ձեռքը բռնեց
— ասում է քուրդը և սկսում է
պատմել, թէ ո՞րպէս Հայրիկի թըշ-
նամիները կոշտանցին նրան, և որ-
պէս ինքը խոտաղարկ կատարել
այդ և զեռնապարծութիւնը, բայց
խղճի ձայնը ասաց նրան, թէ պէտք
չէ սուր բարձրացնել Աստուծոյ
օրհնատի վրայ :

— Դու էլ օրհնատի լինիս, որ-
դի, — ասում է նրա Հայրիկը :
— Գնա՛ խաղաղութեամբ, — ասաց այդ

քուրդը, ինչ որ պատմեցիր ինձ,
ուրիշ ոչ ոքի չը պիտի յայտնես :

— Դու խնայում ես քո թշնա-
միներին, — հարցնում է աւազա-
կը զարմանալով :

— Աստուած այդպէս է պատ-
ուիրում, — պատասխանում է
Հայրիկը :

Բայց, չը նայելով Հայրիկի
պատուէրին, քուրդը ամեն տեղ
պատմում է նրա կեանքի դէմ
դաւադրութիւն սարքող անձինք-
ների անունները, և այդ լսում է
ամբողջ քաղաքը :

— Ո՞վքեր են այդ դաւաճան-
ները, — հարցրեց Ասլանը :

— Մի քանի եկեղեցականներ,
միացած մի քանի աղաների հետ,
որոնց պարագլուխն է մեր քաղա-
քի սրբազան Առաջնորդը, պատաս-
խանեց աբեղան :

— Ի՞նչ էր առիթ տուէլ նը-
րանց՝ մինչ այդ աստիճան անի-
րաւութեան դիմել, թափել տա-
լով մի անմեղ արւուն, — հարցրեց
Ասլանը փոքր ինչ զայրացած ձայ-
նով : — Միթէ՞ դպրոցը, լոյսը,
կրթութիւնը այդքան ատելի է
նրանց :

— Ես չեմ կարծում, — ասաց
աբեղան, — որ նրանք լուսաւորու-
թեան թշնամի են և այդ պատճա-
ռով զինուորով եւ նրա տարա-
ժողների դէմ: Նրանք չեն կարող
թշնամի լինել լուսաւորութեան,
որի մասին ամենեւին հասկացո-
ղութիւն չունեն, որի վրա երբէք
չեն մտածել: Խնդիրը բոլորովին
անտեսական է: Մի ժամանակ,
որպէս քանի րոպէ առաջ ստեղծ
այդ վանքում կանոնաւոր անտե-
սութիւն չը կար. նրա եկամուտը
վստում էին միաբանները, և ինչ
էլ որ մնում էր, Առաջնորդի կո-
կորդն էր անցնում: Բայց երբ
Հայրիկը վստահար դարձաւ, նախ
վանքը մաքրեց անպիտան միա-
բաններից, նրանց փոխարէն խմբ-
եց այստեղ աւելի արժանաւոր
անձինք, և այնուհետեւ վստական
արդիւնքները սեպհականացրեց իր
նոր կառուցած Հիմնադրութիւննե-
րի պահպանութեան համար: Այդ
բոլորից յետոյ, շատ բնական է որ
այն անձինքը, որոնք առաջ վստա-
նում էին վանքի եկամուտները,
կը թշնամանային Հայրիկի հետ :

— Բայց միթէ՞ Հայրիկը բա-
րեկամներ չունի :

— Ունի, բայց Հայրիկի բա-
րեկամները այնպիսի հզօր մարդիկ
չեն, որպէս նրա թշնամիները :
Հայրիկի բարեկամները ժողովրդի
հաշմամբ, հարստահարմած և ա-
մեն իրաւունքներից զրկված դա-
սակարգն է : Հայրիկի բարեկամ-
ները աղքատ շինականներն են,
քաղաքի արհեստաւորներն են, և
անտուն, անտեղ, անհող, ան-
ջուր ստրակներն ու բանուորներն
են, — և մի քանի երիտասարդ-
ներ, որոնք աղնիւ սիրա և բարի
ցանկութիւններ ունեն, բայց ի-
րանց ցանկութիւնները կատարե-
լու համար ոչինչ միջոցներ չունեն :

(Քաղ. Բաժնիկի կայծերէն)

ՄԱՋԵՐՈՒ ՄԵՂԻՔԸ

Փարիզեան Հերալտի վերջի
թիւերու մէջ կը կարդանք թէ նոր
ազանդ մը ելած է ի Ռուսաստան,
որոյ հետեւողք իրենց գլխի և ե-
րեսի լուրը մազերն կածելին՝ ա-
ստեղ զոյսութիւնն մեղք համարե-
լով: Մինչ ցայսօր կուտա լինելն
դժբաղդութիւն մը կը համարուէր
բայց այս ազանդին համար այսու-
հետեւ տուալթիւնութիւն մը պիտի
լինի այդ :

ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ ԻՄՍԱՏՈՒՆ
ՈՍՈՒՅԵՐ

— Մարդուս ամէնէ աւելի
գոհարութիւն տուողն իւր իսկ
անձն է :

— Շատեր կենաց մէջ յաջո-
ղութիւն կը գտնեն իրենց թշնա-
միներու հակառակութենէն մեղ-
եալ, իսկ շատ քիչեր բարեկամաց
քաջալերէն կը յաջողին :

— Բնութեան օրէնքն միայն
միշտ անխաբար կը գործադրուի :

— Միշտ յուսալից երեւցիր,
ոչ երբէք յուսահատ :

— Թէ երկինքի մէջ և թէ երկ-
րի վրայ ամենէ սիրելի բանն սէ-
րն է :

— Անհաւատը բնաւ չի փոր-
ձեր մէկը դուրս հանել փոսէն :

— Ոչ մի մարդ կրնայ երջանիկ
լինիլ առանց զխախտել թէ յառ-
ցանք մը չունի :

— Ծննդ այն րոպէին երբ ո՛չ
կըսենք մեր անձին, չարութեան
մը առջեւ կեցած կը լինինք :

— Երիտասարդութիւնն կեր-
դէ, բայց ծերութիւնն ականջ կը
դնէ անոր :

— Միտքն է որ բարոյականը
կը շինէ :

— Մեղքը անբաւելի է այն ա-
տեն երբ զղջումն չի ընկերանար
անոր հետ :

— Մորմուտէ մի վախար. եթէ
մորմուտ չի լինէր աշխարհի վրայ,
կեանքը բնաւ մը պիտի դառնար :

— Սատանան բնաւ եկեղեցի-
ին մէջ չի քնանար :

— Ամէն անոնք որք կը նե-
րեն, որ մը ներողամտութեան
կարծանանան :

— Առանց յանցանքի մարդիկ
շատ բարեկամներ չեն կրնար ու-
նենալ :

— Այսօր բարիք ըրէ, և վաղ-
ուան հոգը Աստուած կը հոգայ :

— Հաւատքը բնաւ չի դե-
գերիլ ձեռքերն գրպանին մէջ
դրած :

— Այն րոպէին երբ մարդս
կունենայ բարի ամուսին մը, դէպ
երկինք հօկայ քայլ մ'առած կը
լինի :

— Այն մարդը որ աշխարհիս
աղէկ դադախար մը կուտայ՝ շա-
տաւորու կեանք տուած կը լինի :

— Այն որ կը նախանձի ու-
րիշի ստացուածքին կամ գործոյն՝
վստահ լինելու է թէ նախանձորդ-
ներ ունի իրեն դէմ :

— Անոնք որք ուստելու հա-
հար միայն կապրին, շատ ան-
գամ ոչինչ կը գտնեն ուստեղեւ
համար :

— Մեծ ընդունակութիւն և
մեծ խորհուրդներ ունեցող մար-
դիկ երբեմն ապրուստ անգամ
ձարելու դիւրութիւն չեն կրնար
ունենալ :

Ա. Զ. Դ

Քաղաքիս «Մընտէյ Ատվէր-
թայըրը» լրագրի Փետրուար 28
թիւն որ կը պարունակէր Տ. Խա-
չիկ Օսկանեանի մի պատկերա-
զարդ յօդուածն, զրկեցինք ամէն
անոնց որք փութացին ժամանա-
կին հրաման յղել մեզ: Այժմ չորս
օրինակներ միայն ունինք մնացած
որք ի հարկէ պիտի սպառնին բո-
ւորովին այս տողեր լայս տեսած
ժամանակ: Ուստի կը խնդրուի
Հայ հասարակութիւնէն չի հօդնիլ
ի զուր տեղը նոր հրամաններ յղե-
լով մեզ :

Բ. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏ
ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆ ՈՒԹԵԱՆ
ԵՒ
Ս. ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ
Հ. Հ. Մ. Ն. Ե. Օ.

ԸՆԴ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ
ԱՐԺ-Վ-Յ- ՍԱՐԱՃԵԱՆԻ

Ողբերգութիւն
ՎԱՅԱՆ ՍԱՄԻԿՈՆԵԱՆ

Յերին արարս
Կատակերգութիւն

ԵՐԻՑ ՔԱԶԱՑ
Մէկ արար

Կարգադիր Մատնախումբն պա-
տիւ ունի ծանուցանել Հայ հասա-
րակութեան թէ այս թատերական
ներկայացումն ու մեծ հանդէսն
որ տեղի պիտի ունենայ, 1892 Ապ-
րիլ 30, Շաբաթ երեկոյ, ժամ 8,
Ի ՊՕՀԵՄԻԸՆ ՆԵՇՆԵԸԸԸ ՀՕԼ

Bohemian National Hall,
533 5th St. N. Y. Bet. A & B, Ave's

Ի յիշատակ վարդանանց նահա-
տակութեան՝ պիտի լինի իւր տե-
սակին մէջ առաջինն և ամէնէն փա-
ռաւորն։ Այն մեծ որսհը ուր տեղի
պիտի ունենայ հանդէսն, վարձու
առնուած ընտիր հազուադէպ և
գերասանաց վարձ լինին արդա-
րեւ գրուական եւ այս մասին։

Լսելով որ ուսման ժողովուրդի
մէջ լուր տարածած են թէ սա
թատերական ներկայացումն ուրիշ
անգամներ տեղի ունեցածներուն
նման հասարակ բան մը պիտի լի-
նի, և ոչ այդչափ կարեւորութիւն
տալու արժանի լին. հարկ կը հա-
մարի մասնախումբն ծանուցանել
թէ այդ կարգի գրուցներն անհիմն
են բոլորովին, զի պատրաստու-
թիւնը, վարձուած թատրոնն,
նուազարաններն և այլն ցոյց կու-
տան այժմէն թէ կարծած լինել պէս
հասարակ բան մը չէ այս որպէս
այն ներկայացումներն որք տեղի
ունեցան յանցնելով։

Նուազարանը պիտի նուազ-
ուին Փրօֆէսոր Մ. Ա. Կեարամէյի
և անոր ընկերաց կողմանէ։

Արեւելեան նուազարաններ չի
պիտի լինին այս անգամ։

Հարկ է ծանուցանել նաեւ թէ
կաղզուրանաց և չոր պտուղներու
համար մեծ հոգ տարուած է, նը-
մանապէս Ա. և Բ. կարգի տոմս
ունեցողներու համար «հէթ չէքը»
ծրի կլինի, այսինքն այս կարգերն
նստող անձանց զլխարկներն կամ
հովանոցներն չեն. պիտի պահուին
առանձին տեղ մը կարգադիր մաս-
նախմբի կողմէ։

Ա. և Բ. կարգի տոմսերու հա-
մար մասնախումբն նստարաններ կան
թիւերու վրայ չարուած, իսկ Գ.
կարգի տոմս ունեցողներն կար-
գաւ պիտի լսեն իրենց տեղերն
առանց մասնախումբն ունե-
նալու։

Մասնակներու համար մուտքը
ծրի է, և թէ սոքա ընկերացած լի-
նին իրենց ծնողաց կամ խնամա-
կալաց հետ։ Ի հարկէ օրորոցի
մասնակի չեն ընդունուիր։

Շատ մը տոմսեր գրուած են
այլ և այլ անձանց վաճառուելու
համար, մասնախումբն կը խնդ-
րէ այս անձերէն որ մինչեւ ամ-
սոյս 20ին չի վաճառուած տոմսե-
րէն ու վաճառուածներու գրամն
հաճին հասցունել Ա. ՉԱՏԱՐԱԿԱՆԻ
խմբագրութեան։

Հարկ է նաեւ տպաւորել հա-

սարակութեան մտքի վրայ սա հը-
մարտութիւնն թէ արաւիկն դռնե-
րն պիտի բացուին ժամը 7 ու կէ-
սին, իսկ վարագոյրն պիտի բացուի
8ին անհրաժեշտ, զի արահն որոշ-
եալ ժամանակի համար վարձուած
է միայն։

Մինչ վերջի օրն տոմս չի գը-
նող անձինք պիտի կրնան տոմս
գնել «պարս օֆիսին» որ պիտի
բացուի ժամը 7 ու կէսին ճիշդ։

Դիւրութեամբ հանդիսատե-
սին հասնելու լուադոյն ծանա-
պարհներն են հետեւեալները։

Պրուքլինէ եկողներուն համար
«Պլու քար» կառքը որ Սիթի Հո-
ւէն կենէ և կամուրջի առջեւէն
անցնելով կերթայ Ալէքսիւ Բ.
Ուէսթ Նիւ Եորքէ եկողներուն հա-
մար, «Կրին քար» կառքը, որ Ու-
էսթ 42րդ փողոցէն կենէ և Ալէ-
քսիւ Բ. էն կանցնի։ Հոգոքնէ ե-
կողներուն համար «Գրոս Թաուն
քար» կառքերն որք քրիսթըֆըր
փողոցէն կենեն ու կուգան Գէպ
Արեւելք։

Նմանապէս առաջին և երկրորդ
Ալէքսիւներու կառքերն ու երրորդ
և երկրորդ Ալէքսիւներու երկա-
թուղիներն դիւրին ճամբաներ են
Ալի Թաունէ եկողներու համար։
Տոմսերն կարելի է ընդունել
Գործարար Մատնախումբի անդամ-
ներէն և կամ

Լրագրոյս խմբագրութեանէն,
Տ. Տաղլեանէ, 779 2րդ ալիւ
Տ. Յ. Յովսէփեանէ, 43 Սէնթ
ըսթրիթ, Պրուքլին,
Տ. Ալեքսեանէ, 432 Ուէսթ,
56րդ փողոց Ն. Ե.
Պ. Յ. Չուքլեանէ, Բօքսթ փողոց
Տ. Պ. Չանկալեանէ, 455 Փա-
լիսթ փողոց, Ճէրզի Սիթի,
Տ. Յ. Չուքլեանէ, Փաթըրթը
Ի գիմաց կարգադիր մասնա-
խմբին։

ՉԱՐԱԿԱՆԻ ՊԱՅՄԱՆՈՒՄ

Եւրոպայէն Ապրիլ 5 թուով
հասած հեռագրական լուրերը կը
ծանուցանեն թէ Բէթրէսպուրկ,
Ռուսիայի մայրաքաղաքը մէկ սար-
սափելի պայթիւն մը տեղի ունե-
ցեր է, որով բոլոր բնակիչք յա-
կարծակի ահ ու գողոյ մէջ են ին-
կեր։

Ռուսիոյ տեւրութիւնը, իւր
մայրաքաղաքին մօտ մեծ գործա-
րան մը ունէր՝ ուր կը պատրաստ-
ուէին նորեւելի «անմուտ» փառք։
Հինգ թօնէլաթախ չափ պատրաստ
կար այս փառքէն որ կը բաղկա-
նար (կընդօթեցն) ըստած բամ-
պակէն։ Այս բամպակը պատահ-
մամբ բռնկելով՝ սարսափելի պայ-
թիւն մը կը զարուցանէ բոլոր քա-
ղաքը տեղէն խաղթելով, անանկ
որ աստիկ երկրաշարժ մը տեղի
ունեցած ըլլար և որոյ ազդեցու-
թիւն միջին մը աւելի հեռաւոր
տեղերու տիրեր է։ Սորա պատ-
ճառը ուսկից յառաջ եկած ըլլա-
լը չէ իմացուեր, քանզի մէջը գըտ-
նուող բանուորներէն մէկը ողջ չէ
մնացեր որ իմացուի. ամենքն ալ
չէնքին հետ երկինքը ելած են։
Սոցա մարմնոյն կտորները 7—800
ոտնաչափ հեռու տեղեր գտնուած
են։

ՄԵԿ ԱՎԵՍԸ 500 ՏՈՒՄ
ԱՐԺՈՂ ԳԻՐԳ

Շէյքարիբի բանաստեղծութիւն-
ներն ծանօթ են անշուշտ մեր ըն-
թերցողաց։ Այս գիրքը առաջին
անգամ տպագրուեցաւ 1609ին Լոն-
տոնի մէջ ձեռք Դանիէլ Կոն-
անի մը կողմանէ, այս տպագը-
րութիւնն ի հարկէ բոլորովին ըս-

պառած է այժմ, բացի երկու օրի-
նակներէ որոց մին անգղիական
միւզէնի մէջ կը գտնուի հիմայ,
իսկ միւսն վերջերս վաճառուած է
5000 տողարի։ Սա գիրքն փոքրիկ
հատոր մ'է 7 մասնաշափ երկայն
ու չորս մասնաշափ լայն միայն,
և կը կուէ 10 ամիսի չափ, որոյ
իւրաքանչիւր ամիսը 500 տողարի
չափ կարծէ։

Կա՞ն արդեօք մեր հին, շատ
հին գրչագիր գանձերու մէջ այս-
պիսի արժէք բերող գրքեր։...

ԱՐԵՎԵԼԵԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ ՄԸ

Նիւ Եորք Հօմ Վիկթոր
թերթը հետեւեալը կը գրէ։

«Հայերն հետաքրքրական ա-
ւանդութիւն մը պահած ունին
իրենց մէջ Արամու և Եւայի անկ-
ման մասին։

«Սոքա կը պատմեն թէ նոյն
անկումէն մէկ օր վերջ Արամ Ը-
սած է իւր կնկան «Դու կը սիրէիր
զիս երբ կրնայի քո ռաից առաջ
գնել Եւային իւր բոլոր հրաշա-
լիքներով։ Ի՞նչ է այժմ կարծիքդ
իմ անձին նկատմամբ, որ եր-
բանի թաղաւոր լինելով հանդերձ
այժմ աղքատի մը աստիճանին եմ
հասած», Եւա կը պատասխանէ թէ
«Ես դեռ կը սիրեմ զքեզ»։ Արամ
զայս լսելով ընկերացաւ իւր տիկ-
նոյ պատասխանելով թէ «քու տէ-
րող դրամները կը մոռցուին ինձի»։

Բայց օճը մացառի մը Եւա
պահուած կը յաւելու «այո, կը
սիրէ զքեզ» միայն սա պատճա-
ռաւ թէ ուրիշ մը չի կայ սիրելու»
Եւա կը չի ինչ, և Արամ տիրու-
թեամբ ճակատն չփել կսկսի»։

ԶՈՒՍՐՃԱՆԻՔ

Արհեստով որմերն ճեմկցնող
մի Իրանացի գաստարան կոչուած
էր մի օր իւր վկայ։ Հակառակ կող-
մի փաստարանն ուզելով սլինչի
հանել սորա վկայութիւնն հետե-
ւեալ հարցերն սկսեց ընել։

— Գու անուո՞ք Ծ. Մալլըր է։
— Այո, տէր։

— Գու այն Մալլըրն ես որ
գողութեան յանցանքի մը համար
բանտարկուեցաւ վերջերս։

— Չէ՛, պարոն, ես այդ անձը
չեմ։

— Գուցէ այն անձն ես որ եր-
կու տաքի բանտարկուեցաւ նմա-
նորինակ յանցանքի մը համար։

— Չէ՛, բարեկամ, ես այդ
անձն ալ չեմ։

— Դու ճաւ բանտ գացած չե՞ս։

— Այո, երկու անգամ միայն։

— Առաջին անգամ որչափ ա-
տեն բանտի մէջ մնացիր։

— Երեք ժամ միայն։

— Երեք ժամ միայն։ Ուրեմն

որչափ ատեն երկրորդ անգամին։
Պատասխանելէ առաջ պարտիս
գիտնալ թէ երբեւմ ըրած ես
ճշմարտութիւնն իստեղծ։ Ես կու-
զեմ ըսես թէ ինչո՞ւ համար ա-
ռաջին անգամ այդչափ քիչ ատեն
բանտարկուեցար։

« Իւր պաշտպանեալն խորող
փաստարանի մը համար պատրաս-
տուած մի սենեկի պատերն ճեր-
մըղցնելու համար միայն բանա
գնացած էի, առաջին անգամ, Պ.
փաստարան։

Փաստարանն զայս լսելով ալ
ոչինչ հարցուց այդ մասին։
(Երբեք չեմ)

— Սարգի որոտայն (ճանձին) Չէ՞ք
հաճիր իմ հիւրանոցս մտնել հան-
գիտս ընելու համար։

Ճանձը — Չէ, շատ չնորհալա-
եմ, զի ձեր հիւրանոցն մտից հա-
մար մէկ դուռ մ'ունի, բայց դուրս
երեւելու ճամբայ չկայ բնաւ։ Աւե-
լի լաւ է դուրս մնալ և առանց
վտանգի։

— Գ. ժամա-
գործ, ժամացոյցս կեցեր է։

Ժամագործ — (Ժամացոյցն
լաւ մը քննելէ վերջ), կերեւի թէ
մեծ փորձանք մը պատահած ըլլա-
լու է։

Յաճ. — Չէ բնաւ։

Ժամ. — Գուցէ բաժնունիդ
երկայններն հանած ատեն ժամա-
ցոյցն գետնիը ինկած է։

Յաճ. — Ամենեւին այդպիսի
բան մը պատահած չէ, զի շատ
ուշադրութիւն կընեմ այդ մասին,
բայց ինչ է իցէ, ե՞րբ կրնաք զայն
կարգի դնել։

Ժամ. — (Նորէն ժամացոյցն
քննելէ վերջ), մէկ շաբաթէ առ-
նուաղն, բայց եթէ կրնաք առանց
ժամացոյցի մնալ, խրատ կուտամ
ձեզ երկու շաբաթ ժամանակ տալ
ինձ։

Յաճ. — Շատ աղէկ, աղէկ մը
չինքեք զայն։

Ժամ. — (աշակերտին) առ այս
ժամացոյցը, մեծ անխել մէջ ին-
կած փոշին դուրս հանէ և պահէ։
Երբ ահաք երկու շաբաթ վերջը
զայ հինգ տուար ինքզինք իրմէ իբր
վարձք։

(Գրեմ)

Անցեալ օր Հարլըմի կողմերն
բնակող մի անձ մտածեց իւր մօ-
րուքն ամիսը տալ և յանկարծ
իւր կնկան ներկայանալ՝ զայն զար-
մացնելու համար։ Հետեւեալ օրն
թէ մօրուքն և թէ պնկներն ամի-
սը բաղխեց։ Կինն դուռը բանա-
լով և իւր սիրահարն կարծելով
անմիջապէս նորեկի վզին փաթ-
թուելով զայն համարուել սկսեց։

— Բանէ փոփոխութիւնն շատ
հաճելի թուեցաւ քեզ սիրելիս,
բնաւ, անմօրուս ամուսինն։

— Ո՛հ երկինք, բացականչեց
կինն, դու՛ ես եղէր ձօրձ։

— Ձօրձ զայս լսելով մարեցաւ
ու գետնին ինկաւ։

ՊՈՂՈՍ ԱՂԱՃԱՆԵԱՆ

ՆԵՐԱՄԻՉ ԵՒ ԱՐՏԱՄԻՉ
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ
ՏԵՂԱԿԱՆ ԵՒ ԱՐՏԱՄԻՆ ԱՊՐԱՆԻՔ-
ՆԵՐՈՒ

Թիւ 60 Փըրըլ փողոց Նիւ Եորք

Պատիւ ունի ծանուցանել ընդ-
հանուր Հայ հասարակութեան թէ
իւր գործի բերմամբ ամէն տեսակ
պարանդներ կրնայ բերել տալ
Թուրքիայէն կամ ուրիշ երկրներն-
րէ Յաւ հարկուր միջնորդչեքով
միայն։ Այժմ առ ձեռքն ունի
Տաճկաստանի ընտիր պտիւր (քէ-
լէ փէնի) և ձեթապտուղ (դէյ-
թին)։ Սոքա փոքր քանակութեամբ
չեն ծախուիր թէեւ, բայց Հայոց
համար իւր բացառութիւն պանիրն
կը վաճառի կտորով միայն, որոյ
իւրաքանչիւր կտորը կը կուէ իւր
տարբերութեամբ։ Փառնաբեր կար-
ծէ 22 սէնթ, իսկ ձիթապտուղն
կը վաճառուի տակառով, փառնե-
տը 8 սէնթի։ Իւրաքանչիւր տա-
կառ կը կուէ իւր 150 փառնա։

Մի մոռնաք անունն ու հաս-
ցէն։ Ուրիշ անգամ պայպիսի առիթ
ձեռք չիկնար։ Ապրանքներն ամէ-
նէ ընտիր տեսակներէն են։
Դիմել անձամբ կամ նամակաւ
հետեւեալ հասցէին։

B. AGADJANIAN
60 Pearl St. N. Y.

ՃԳՆԱԻՈՐ ԷՂՕ
Ա.

— Չէ՛, այսպէս չի լինի...
վարենք մենք, հնձէ Հասան բէգը,
Ժողովներ մենք, շարքարուենք մենք
«Կոսթ-բեգի» դիմանանք մենք,
Հասան բէգը հանգիստ՝ մէջքը
բարձին տայ ու մեր քրտիկը ու-
տէ, մեր կանանց քաշէ ու երէն
մեր ամեն բանը ծաղրէ...։

— Մեզ ասէ թէ՛ «Գրիտտոս էլ
ինձ նման աւագակ էր՝ խաչեցին»

— Գոռայ թէ՛ Հայը գետաւոր
է, գետաւորն ո՞վ է, որ սիրուն
կին ունենայ, տաւար ու եղ ունե-
նայ...։

— Հանգիստ ապրի...։
— Գետաւորը ստեղծուած է,

որ միւսեմանին ծառայէ...։

Այս խօսքերը տեղի էին ու-
նենում սրանից մի քանի տարի ա-
ռաջ՝ Մուշի Չուխուրայ կողմի գիւ-
ղերից մէկում գտնուող՝ մի մեծ
տան սենեակում, ուր հաւաքուած
նստել էին 30—40 ծերեր և լսում
էին երիտասարդների այդ կատա-
ղի խօսքերը։

— Չօ՛, գոռայ մի ուրիշ երի-
տասարդ, — օրը ցորեկով դայ ձեռ-
քիցս կովս խէ՛ ու ինձ էլ ապտա՞կ
խախէ... ասի, թէ որ հայրս չաղա-
չէր լուելու, տես ես ինչպէս նրա
մեծ փողոցը ականջը կը թող-
նէի...։

— Չօ՛, ձօ՛, ձօ՛, գոռեց ծա-
նութեամբ ծերունիներից մէկը՝
երիտասարդին դառնալով, — Ե-
զուդ քեզ քաշէ՛ դո՛ւ ով, այդ-
պէս մեծ խօսքերն ու՞. դու էլ նա-
հատակ լինելը ես մէջ տեղ բերում,

էլ չես մտածում, որ եթէ մի շաբ-
թում գործես քեզ պաշտպանելու
առաջ քեզ և ապա ամբողջ ընտա-
նիդը կտոր կտոր կանէ անօրէնը՝
գիտես թէ՛ որ տեղ ես, ի՞նչ ես
կորցրել, ի՞նչ ես որոնում... ո՛ւր
է իրաւունք, ո՛ւր է արդարու-
թիւն, բոլորը Հաշի Թայրիբի (*) փե-
շերի տակ են թագնուել։ քանի
քանի հրաշքով՝ մարդու նմանող
միւթէսէրիֆներ փորձեցին իրա-
ւունքը և օրէնքը այդ փեշերից
աղաատել, բայց Հաշի Թայրիբը հե-
ռազիր տուաւ իւր զիպցած տե-
ղը, մաշցով Մշայ երկրից թոցը-
րեց այդ «Երախաներին» և օրէնքը
այս անգամ բարձ չինելով՝ գլխի
տակը դրաւ ու այսու ան այն բէգի
ձեռքը մի սուր տուաւ։ Չէ՛ նոյն
կտորի ու մեզ փորձուածներս
լսիր՝ հալա, քանի կարող ենք,
քար ծար կանենք, որ մեր կրօնը
ու ունեցածը պահենք, երբ չկա-
րողացանք... է՛հ, հալաթ Հային
էլ Աստուած կայ...։

— Լաւ է ասում Աստուծ, դի-
տեց մի ուրիշ ծերունի, — եր-
թանք այդ անիծածի մօտ, նորէն
աղաչենք, ոտքերն ընկնենք, իր
մարգարէն իրեն յիշեցնենք, բալ-
քի մեզ ողորմէ։

— Տէր, ողորմեա, գոռեց մի
ուրիշ ծերունի, — դեռ երէկ էր,
որ անիծուածի ոտքն էլ լիզելու
իջանք։ էլի՞ դնանք։

— Ի դուրս, մէջ մտաւ չոր-
րոր ծերունին, Հասան բէգը
զգուել է մեր աղաչանքներից. նա
երէկ ինձ ասում էր. «գետաւոր-
ներն, ձեր աղաչանքները զոգուե-
ցրին ինձ, ձեր գլուխ էլ ձանձ-
րացրեց ինձ, բերէք 500 ոսկի տը-
ուէք, ես երեւմ երթամ գիւ-
ղիցը...»

— Հա՛, գոռեցին բոլորը ու-
րախացած, — փա՛ռք Աստուծոյ,
մենեմ գորութեանդ, Աստուծո՛ւ։
— Ոտացդ հողն եմ, Մշու Սուլ-
թան Ս. Կարապետ։

— Բզի դուրան, Առաքելոց
վանք։

(Շարունակելի)

(*) Մուշի մէջ մի յայտնի չէյիս
աւագակաղեմ, որ շատ աղղ եցիկ
մարդ է։ Հանրաժամութ Մուսա
բէգի աներն է, մինչեւ այժմ կեն-
դանի և երկիրը տակն ու վրայ է
անում։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. ԷԿԻՆԵԱՆ

Այս երգարանն որ իւր տեսա-
կին մէջ մինչ ցարդ տպուածներէ
թէ՛ գերազանցն և թէ՛ ամէնաւն-
գարձակն պիտի լինի, մաքուր
թղթի վրայ ընտիր տպագրու-
թեամբ, Բաղր գիրքն պիտի լրա-
նայ իբր երկու ամիսէն:

Հասարակութեան թախան-
ձանաց համեմատ որոշած ենք իբր
500 օրինակ ֆորմա առ ֆորմա
ծախել: Մէն մի ֆորմա 16 երեսէ կը
բաղկանայ և կարծէ երկու սէնթ:
Ամբողջ գրքին գինն է 50 սէնթ,
75 սէնթ և մէկ տողար՝ կազմին
համեմատ:

Սոյն ֆորմաներէն գնել ու-
զողներ կրնան դրամն յղել խմբա-
գրութեան փոսթայի գնոյն հետ
մէկտեղ: Մէկէ աւելի օրինակ դը-
նողներէ ձամբու ծախք չի պա-
հանուիր:

Ա. Զ. Դ.

Նիւ ձէրզի նահանգի Փասա-
տինայ գիւղին մէջ մէկը երկու
կտոր երկիր ունի ծախու: Գիններն
աժան են և պայմանք դո՛հացու-
ցիչ: Գնել փափաքողք պարտին
գլխով հետեւեալ հասցէին: Մ. Զ.
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻ ԽՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ
միջոցաւ:

Ս. Ա. ՍԱՄՈՐԱՆ

107 Ֆէտէրալ փողոց,
Փրովիտէնս Բ. Ա.

Պատիւ ունի ծանուցանել ար-
դոյ Հայ Հասարակութեան թէ
գործակալն լինելով չորեքշաբթի
հաշակաւոր ընկերութեան մը,
գիւրութիւն ունի ամէն կարգի
տոմսակներ վաճառել եւորպայի
ամէն քաղաքներու համար և թէ
փոխադարձաբար:

Գիններն խիստ գիւրամատչելի
են: Փափաքողք պարտին գլխով
հետեւեալ հասցէին:

S. A. SAMOOR.

107 Federal st, Providence, R. I.

ՆՄԱՅՇՆԵՐ

Մ. ՓՈՐԹՈՒԹՅԱՆ ԵՄԵՆԻ
Գրած ոտանաւորներէն

Մ. Փորթուգալեանի գրած
Հայրենասիրական ոտանաւորներէ
մի քանին ամփոփուած են այս
տետրակի մէջ իբրեւ նմոյշներ զո-
նաղան քաղաքների մէջ և զանա-
զան տպագրութիւնների տակ
իւր երբեմն գրած ոտանաւորնե-
րին որոնք ժամանակին հրատա-
րակուած չը լինելով կորսուած
են այժմ: Այն մի քանի ոտանա-
ւորներ որոնք իբրեւ նմոյշ ամ-
փոփուած են այս տետրակի մէջ:
ցիր ու ցան կը գտնուին Կ. Պօլիս
տպագրուած ազգային երգարան-
ների մէջ որոյ վերստին տպա-
գրութիւնն վաղուց արդէն ար-
գիւրուած է և «Ասիա» և «Արմենիա»
լրագիրներին մէջ: Նմոյշների մէջ
փոքրիկ տեղեկութիւններ աւը-
ուած են նաեւ թէ՛ այդ ոտանա-
ւոր ինչ տպագրութիւնների տակ
ներշնչուելով գրուած են:

Գինն է 15 սանթիմ:

Ա. Զ. Դ.

Ի նպատ Հայ երիտասարդաց
Թանգարանի Միութեան կը ծախ-
ուին:



1. Բաֆֆի վերի պատկերին
խողորագիրը, տասնըմէկ ու կէս
մատնաչափ երկայն և ութը մատ-
նաչափ լայն: Գին 10 սէնթ:
Գում Գափուի հերոսներու
պատկերը:

2. Յարութիւն Չունգուլեան
3. Կէմալադ Մանուկ
երկուքը 5 սէնթի:

Գնել փափաքողներ կը պար-
տին գլխով Միութեան Թանգա-
րանապետին կամ նորա գործա-
կալաց և կամ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԼՐ-
րագրի խմբագրատունը:

Փոստի ծախքը մեր վրայ է:
Պետրոս Թորոսեան
Թանգարանապետ
779 Երկրորդ ամիս Նիւ Եորք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱԿԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ս. Ա. ՍԱՄՈՐԱՆ
ՓՐՈՎԻԴԵՆՍ Բ. Ա.

Ա. Զ. Դ.

Հայ երիտասարդաց Թանգա-
րանի Միութեան նշանակաւոր-
ութիւնն պատիւ ունի ծանուցանել
թէ ի գիւրութիւն ընթերցասէր
Հասարակութեան հետեւեալ գոր-
ծակալութիւններն հաստատուած
են Նիւ Եորքի, շրջակայից և այլ
քաղաքներու մէջ:

- Տ. Մ. Տաղլեան,
- Նիւ Եորք 779 Երկ. Ավ.
- Տ. Յ. Աղապետ, Նիւ Եորք.
- 432 Ուէսթ 56րդ Փողոց
- Տ. Մ. Շիլմանեան,
- 91 Մարտիս Փողոց, Նիւ Եորք
- Տ. Յ. Համալեան,
- Ն. Ե. 43 Սանտ Փոյգ Պրուքլին
- Տ. Յ. Պատմահան,
- Բօլէճ Փոյնթ, Լ. Ա.
- Տ. Կ. Չանգալեան,
- 455 Փալատիս Ավ. ձէրզի
Սիթի Հայթս, Ն. Ճ.
- Տ. Պ. Տէյրմանեան,
- 313 Ուէսթ Ընդլիթ, Ուէսթ
Հոպլըն Ն. Ճ.
- Տ. Յ. Չունգուլեան,
- Փաթրըն, Ն. Ճ.
- Տ. Յ. Թօրաւահանեան,
- Ֆիլատէլֆիա, Փէնս.
- Տ. Յակոբ Թօրաւահանեան,
- Մալպրո և Թըրնիվել, Բօնն.
- Տ. Տ. Խոհարարեան,
- Փրովիտէնս, Բ. Ա.
- Տ. Կ. Սոպահեան,
- Եօնքըրըս, Ն. Ե.

F. SOHAUB,



431 Palisade Avenue,
JERSEY CITY N.J., U.S.A.

Open day and night.

Igniniav
Binding &
Mailing Co.

12 Frankfort Street,

NEW YORK.

Open day and night.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱԿԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆՈՒՑՈՒՄ.

Այն ամէն Հայերն որք կը փա-
փաքին դրամ գրկել իրենց բարե-
կամաց ի Թուրքիա կամ ի Յունաս-
տան, Չէք Պանք դրամատան փո-
խանակարներն պիտի գտնեն ա-
մենաապահով, ամենաաժան և
լաւագոյն:

MATHEWS & CO.,
BANKERS.

No. 2 Wall St. New York

Andrew Scott, John May

Scott & May,

Illustrated

and Plain Newspaper,

BOOK & JOB

PRINTERS.

PRESS ROOMS:

15 Spruce St., NEW YORK.

Presses Running Day & Night.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱԿԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼՐԱԳԻՐ

Ա. Զ. Դ. Ա. Յ. Ի. Ն.

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՅԺՄ
ՏԱՄՆ ԵՒ ՀԻՆԴ ՕՐԸ ՄԷԿ ԱՆԳԱՄ

Տարեկան բաժանորդագրինն մէկ
տողար մ'է միայն,

ԿԱՄ ԵՐԵՒ ՕՐԸ ՄԷԿ ՍԷՆԹ.

Ամէն մէկ թուի մէջ

Խմբագրական յօդուածներ, Թըղ-
թակցութիւններ, զուարճալիք և
այլ կարեւոր յօդուածներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱԿԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ARMENIA

an

ANGLO FRENCH JOURNAL

Political & Literary

Published on 1st & 16th of
every month.

Editor: Minasse Tcheraz,

Ex-Armenian Delegate at the Ber-
lin Congress.

Address: 28 Bedford Place,
London, W. C. ENG.

I. A. ISAACS,

Տպագրչաց և Կազմարարաց վե-
րաբերեալ մեքենաներ.

36 & 39 Beekman St.,

Նիւ Եորք.

Ծան. Երբ կը գնէք մի մոռանաք
ըսել թէ ծանուցումն ԱԶԱՏՈՒ-
ԹՅՈՒՆԻ մէջ տեսաք:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Կ Ս Կ Ծ Ա Ն Բ

Գրեց
Հ. ԷԿԻՆԵԱՆ.

Հեղինակին ընտիր մէկ բա-
նաստեղծութիւնն է այս արձա-
գրուած, որ կը վաճառուի խմբ-
ագրութեան քով հատը 5 ՍԷՆ-
թի միայն:

ԼՈՅՍ ԵՒ ԽԱԽԱՐ

Գրեց
ՊԱՏ. Կ. ԲԱՐԱԿԵԱՆ

Կը վաճառուի Նիւ Եորքի մէջ
Խմբագրութեան, իսկ յիւսիս-
Հեղինակին քով, հատը քսան և
հինգ ՍԷՆթի:

Ա Ր Մ Է Ն Ի Ա

ԱԶԱՏԱԿԱՆ ԿԻՍՏԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱԿԱՆ,
ԵՒՆ. ԵՒՆ.

Տարեկան բաժանորդագրինն 5
չորս տողար. Հասցէն.
Redaction du journal
"Armenia",
Marseille, France

Բ Ա Չ Մ Ա Վ Է Պ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ
Ամսաթերթ

ԽԹ. Տարի, 1891.

Տարեկան բաժանորդագրինն 5
տաւ ֆր. (4 Բուրլի). Հասցէն.
Redaction de la revue "Basmavop",
Venise, Italie, St.

ՀԱՆԴԷՍԱ ԱՄՍՈՐԵԱՅ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄԱԿԱՆ,
ԱՐՈՒԵՍԱԳԻՏԱԿԱՆ.

Ե. Տարի 1891.

Տարեկան բաժանորդագրինն է
10 ֆր. (4 Բուրլի). Հասցէն.
Redaction de la Revue "Hantess",
Vienne, (Autriche).
VII Mechitaristengasse, 4.

Ա Ր Մ Է Ն Ի Ա.

Հունգարերէն Ամսաթերթ.

ՊԱՏԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄԱԿԱՆ ԵՒ
ԲԱՐՈՅԱԿԱՆ.

Բ. Տարի. 1891

Տարեկան բաժանորդագրինն է
10 ֆր. Հասցէն.
Szongott Kristoff urnak,
Szamosujvar (Hongrie).